

ՀԱՅՅԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՈՒ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԱՄՆ-ում (1888—1924 թթ.)

Ք. Ռ. ԱՎԱԳՅԱՆ

Հայերը Հյուսիսային Ամերիկա են ոտք դրել դեռևս XVII դ. սկզբին՝ անձնական դրդապատճառներով: Հետագայում, 1834 թ. սկսվել է հայերի կրթական ու տնտեսական բնույթի նպատակային հոսքը դեպի ԱՄՆ՝ ի հետևանս թուրքական պետությունում ամերիկյան բողոքական քարոզիչների ծավալած լուսավորչական գործունեության: Օսմանյան կայսրությունում հայության նկատմամբ կազմակերպված պարբերական շարժերը (1854—1896 թթ., 1909 թ., 1915 թ., 1920—1922 թթ.) բերմանի պանդուխտ հայերի ժամանակավոր տեղաշարժը վեր են ածել զանգվածային գաղթի:

Ամերիկահայ հատվածի հոգևոր ու կրթամշակութային կյանքը, որպես հավաքական ամբողջություն, զարգացել է նոր ծրկրում հայության թվի հետզհետե անմանը զուգորթաց և էական առաջխաղացում ունեցել հասարակական-տնտեսական ու պատմաքաղաքական հանգամանքների բերումով ԱՄՆ-ում հայերի հետագա հիմնավորմանը համաքայլ: Արդեն 1880-ական թթ. վերջին այստեղ հաստատվել էին ամերիկահայ առաջին մամուլն ու եկեղեցական կենտրոնատեղին, որոնք հետագայում ենթարկվելով ժամանակի, միջավայրի, ինչպես նաև ներգաղութային կյանքի տարաբնույթ պահանջների անմիջական ազդեցությանը՝ կազմակերպվել ու դարձել են հայապահպան կարևոր գործոններ:

Հայ եկեղեցին, որպես համայնքի կյանքում առանցքային նշանակություն ունեցող ազգակ, գնահատելի աշխատանք է իրականացրել ամերիկահայության շրջանում ազգային ոգին ու նրկարագիրը, սովորույթներն ու բարքերը մշտաբերուն պահելու ուղղությամբ:

Սկզբնական շրջանում հայ հոգևոր կյանքն ԱՄՆ-ում նախապատրաստական վիճակում էր. «Աշքերը դեպի հայրենիք սևեռեալ և վերադարձի բարկատե՛հ օրվան ակնկառույց սպասող հայ նժգճ՛Ն իր հոգևոր սնունդը փշրանքներով միայն ստացած է՛»¹: ԱՄՆ-ում ազգային եկեղեցի ունենալու պահանջն առավել խիստ է զգացվել XIX դ. 80-ական թթ. սկսած, երբ ժամանակավոր, հետ վերադառնալու հույսով մեկնած անհատ հայ պանդուխտներին աստիճանաբար փոխարինելու են եկել ընտանիքներով, հիմնավորվելու մտադրությամբ ժամանածները՝ իրենց հետ բերելով ընտանեկան ավանդական ծիսակարգի (ամուսնություն, կնուճք և այլն) պահպանման անհրաժեշտություն: Ընդ որում, հայերն ԱՄՆ էին եկել մեծաթիվ հետևորդներ ունեցող Հայ առաքելական և համեմատաբար փոքրաթիվ՝ Հայ ավետարանական եկեղեցիների կրոնական ժառանգությամբ:

Նախքան պաշտոնական եկեղեցի ունենալը, ԱՄՆ-ի հայերից շատերն իրենց հոգևոր մխիթարությունը գտնում էին ամերիկահայ եկեղեցիներ, հատկապես ավետարանական ժողովարաններ հաճախելով, որտեղ քարոզում էին ինչպես օտար, այնպես էլ հայազգի պատվելիներ²: Մակայն անգլերենի իմացություն պակասը, նոր բարքերին ու միջավայրին հարմարվելու դժվարությունները, ինչպես նաև աղեղական եկեղեցական հաստատությունների կանխակալ վերաբերմունքը հայ ազգային կրոնի հանդեպ բազմաթիվ խռչնդոտներ էին նարուցում: Այնպես որ «... ժամանակի մը համար ջերմեռանդ Հայն կ'ապրեր անաղոթք և անեկեղեցի»³:

ԱՄՆ-ում հայերի թվի աստիճանական ստվարացման հետ մեկտեղ ամերիկահայ անհատ նվիրյալներ, ստանձնելով «ազգային կրոնական ինքնապաշտպանություն» գործը, ստեղծել են նախնական կրոնական հավաքատեղիներ (առաջինը՝ 1881 թ. 2. Ցաղիչյանի կողմից), ուր հաճախում էին ինչպես լուսավորչական, այնպես էլ ավետարանական հայերը⁴:

¹ Մուշեղ Նպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույցը, Ա տարի, Բոստոն, 1912, էջ 95:
² Տե՛ս նույն տեղը, էջ 106:
³ Տե՛ս Տ. Մկունդ, Հայ կղերն Ամերիկայի մեջ, ԱՄՆ, 1945, էջ 51:
⁴ Տե՛ս Մուշեղ Նպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույցը, Բ տարի, Բոստոն, 1913, էջ 50,

Ամերիկահայութեան ազգային ու հոգևոր կյանքի կազմակերպման գործում շրջադարձային հարձակում Մարսելում լույս տեսնող «Արմենիա» թերթի խմբագիր Մ. Փորթուզալյանի այցը ԱՄՆ և օտարության մեջ հայապահպանմանն ուղղված համազգայնության նշանակության նրա հրապարակային ելույթները: Անդրադառնալով ԱՄՆ-ի հայերի ազգային ինքնահաստատման ու ինքնապահպանման առանցքային և հիմնական նախապայմաններին՝ Մ. Փորթուզալյանը շեշտում էր. «Հայերը ուր որ դացած են, իրենց հետ տարած են նաև Հայ Եկեղեցին, Հայ Մամուլը և Հայ Գաղտը, և այդ Ազգ. Երրորդությունը շնորհիվ հաջողած են իրենց Ազգ. գոյությունը պահել, հակառակ բոլոր օտարացուցիչ և աննպաստ պարագաներուն»⁵: Արդյունքում, ԱՄՆ-ում հայապահպանման դժվարին գործն իրականացնելու, եկեղեցի, կիրակնօրյա դպրոց, մամուլ և ազգային նշանակության այլ հաստատություններ հիմնելու նպատակով 1888 թ. Ուստրում ստեղծվել է «Կաճառ Հայկական» անվանումը կրող ամերիկահայ առաջին կազմակերպությունը, որտեղ ամեն կիրակի կրոնական ծառայություններ էին իրականացվում⁶:

Ամերիկահայ հոգևոր առաջին հովիվ Հովսեփ վարդապետ Սարաշյանի ջանքերով և համայնքի աջակցությամբ 1891 թ. հունվարի 6-ին Ուստրում հիմնվել է ԱՄՆ-ում հայ առաջին՝ Ս. Փրկիչ եկեղեցին: Հետագա տարիներին երկրի հայաբնակ այլ վայրերում ևս ազգային եկեղեցիների հաստատումով 1898 թ. հոկտեմբերին Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանի շրջաբերականով զաղութում հիմնվել է Ամերիկայի Հայ եկեղեցու թեմը՝ 30 համայնքներով, իսկ Ուստրի Ս. Փրկիչ եկեղեցին վեր է ածվել Առաջնորդարանի՝ Հովսեփ եպիսկոպոս Սարաշյանի գլխավորությամբ (1923 թ. Առաջնորդարանը տեղափոխվել է Բոստոն, 1927 թ. մինչև օրս Նյու Յորքում է, իսկ 1928 թ. Կալիֆոռնիայի տարածքը պաշտոնապես անջատվել է ամերիկահայ եկեղեցիների Արևելյան թեմից՝ ստեղծելով առանձին Արևմտյան թեմ իր Առաջնորդարանով)⁷:

ԱՄՆ-ի հայաշատ տարբեր քաղաքներում կազմավորված Հայ առաքելական եկեղեցիներն իրենց հոգևոր հովիվների, համայնքի կարող ուժերից բաղկացած հոգաբարձուների խորհուրդներին, առանձին բարերարների և անհատ հայերի ջանքերով հնարավորությունների ներածին շահով հոգացել են թեմի հոգսերն ու կարիքները, Առաջնորդարանի նախաձեռնությամբ պարբերաբար իրականացվել են երկրի տարբեր քաղաքներով մեկ ցրված հայրենակիցների մարդահամարներ, ձեռնամուխ են եղել օտարության մեջ հայության ազգային նկարագրի պահպանմանն ու հայանպաստ այլ գործերի: Երկրի գրեթե բոլոր Հայ առաքելական եկեղեցիներում ստեղծվել են գրադարաններ, որոնք ժամանակի ընթացքում հարստացվել են հայրենիքից բերված, ինչպես նաև համայնքի նվիրաբերած գրականությամբ ու մամուլով, քահանայների հրահրությամբ բացվել են կիրակնօրյա, ավելի ուշ՝ նաև ազգային դպրոցներ:

Կանոնավոր եկեղեցիներ ունեցող վայրերում իրականացվել են շաբաթօրյա, իսկ վարձու եկեղեցիներում՝ երկշաբաթյա կամ ամսական կրոնական ծառայություններ: Իրենց ընկալվալիքներում եկեղեցիներ կամ հավաքատեղիներ չունեցող հայերը հաճախել են մերձակայքում գործող եկեղեցիները, իսկ հոգևոր հովիվներից զուրկ համայնքներում կրոնական ծառայություններն իրականացվել են շրջիկ քահանաների կողմից: Ամերիկահայերը սիրով էին հաճախում առաքելական եկեղեցիներում անցկացվող կիրակնօրյա ծիսակատարություններին: Հատկապես բազմամարդ էին ավանդական տոնակատարությունները՝ Ս. Մնունը, Ս. Զատիկը և տերունական այլ տոները, որոնք բոլորն էլ անցնում էին ըստ պատշաճի կազմակերպված ու ճոխ: Գաղութի բազմաշերտ հավատացյալների համար ծիսակատարությունները պատարագվում էին գրաբարով ու աշխարհաբար, երբեմն նաև թուրքերեն, ավելի նվազ՝ անգլերեն⁸:

Ժամանակի ընթացքում ԱՄՆ-ի Հայ առաքելական եկեղեցին, ենթարկվելով ամերիկյան մշտապես բարեփոխվող կյանքի ազդեցություններին, ձերբազատվել էր ազգային հնացած պաշտամունքային ձևերից ու ծիսակազմից. վերացվել էր Սուրբ օրերի հին օրացույցը, այլևս

A. S. Yeretzian. A History of Armenian Immigration to America with Special Reference to Conditions in Los Angeles. A Thesis. California, 1923, էջ 28:

⁵ Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 106:

⁶ Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 59:

⁷ Տե՛ս R. Mirak. Torn Between Two Lands. Armenians in America, 1890 to World War I. Cambridge, 1983, էջ 183, R. Megerdichian. The Armenian Churches in North America: Apostolic, Protestant and Catholic. A Geographical and Historical Survey. Cambridge, 1983, էջ 1, 5-7, A. S. Avakian. The Armenians in America. Minneapolis, 1977, էջ 44. Ա. ԲՆՆ. Աշխատ. Վիճակագրույց և պատմություն առաջնորդական թեմին, Հայոց Ամերիկայի 1948, Նյու Յորք, 1949, էջ 33:

⁸ Տե՛ս R. Mirak. On New Soil, The Armenian Orthodox and Armenian Protestant Churches in the New World to 1915 (Immigrants and Religion in Urban America, ed. R. M. Miller, T. D. Marzlik. Philadelphia, 1977, էջ 149, 159):

պաշտոնապես չէին տոնվում տարբեր սրբերի ու անվանակոչության օրերը, հին երկրում շաբաթ օրերին նշվող կրոնական տոները գործունյա ԱՄՆ-ում հիշվում էին կիրակի օրերին, վեճակներ էին ցերեկային կրոնական ներկայացումներն ու իրիկնային ժամերգությունները, հավատացյալների կողմից եկեղեցու պատերի կամ սրբապատկերների համբուրելը և այլն: Աստիճանաբար դուրս էր մղվում ազգային եկեղեցակարգով 160 օր տևող ծոմապահությունը: Նոր երկրում ժամանակի առաջադրած պայմաններին համաքալլ ամերիկահայ եկեղեցական նորոգվող տոնացույցի մեջ սկսվում էին ներառնվել նաև ամերիկյան որոշ տոներ (Աշխատանքի, Շնորհակալության, Մայրերի և այլն), ինչպես նաև՝ ազգային սգատոներ (1894 թ. Սասունի շարժը, 1915 թ. Մեծ եղեռնը և այլն)⁹:

Ծթն հայրենի հողում ծնված ու մեծացած ամերիկահայերի առաջին սերնդին հարազատ էին առաքելական եկեղեցիներում քահանաների անցկացրած կրոնական ծիսակատարությունների հնաոճությունն ու պարզությունը, ապա ամերիկյան կրթություն ստացած ամերիկահայ երկրորդ սերնդի ներկայացուցիչների համար արդեն ձանձրալի ու անընդունելի էր այդ ամենը: Հետ որում, հետզհետե նվազում էր առաքելական եկեղեցիներ հաճախող ամերիկահայերի թիվը, որոնք նախընտրում էին հարազատ եկեղեցու հետ հաղորդակցվել առավելապես հայ եկեղեցական տոների և համազգային նշանակության միջոցառումներին, ինչպես նաև հայության համար արտակարգ աղիթներով: Ոմանք նույնիսկ վճարում էին տարևվարձը՝ պայմանով, որ հնարավորին շափ քիչ ներկա գտնվեին եկեղեցիների ավանդական երկարատև ծիսակատարություններին¹⁰:

Ամերիկահայերը, որոնց զգալի մասը դեռևս հայրենի երկրում ամերիկյան բողոքական քարոզիչների ազդեցությամբ ավետարանականություն ընդունած պանդոխտներ էին, ԱՄՆ-ում հիմնել են նաև ավետարանական աղոթատեղիներ ու եկեղեցիներ: ԱՄՆ-ի հայ ավետարանականները (ժողովականներ, երիցականներ, մկրտչականներ, մեթոդիստներ, եպիսկոպոսականներ) մշտապես գտնվել են ամերիկյան համանուն կրոնական ուղղության բարոյական ու նյութական աջակցության ներքո, հանգամանք, որից զուրկ էր ամերիկահայ առաքելական եկեղեցին, 1901 թ. դեկտեմբերի սկզբին Ուստրի հայ ավետարանականների և Ամերիկյան Համամիսիոներական նորհրդի համատեղ ջանքերով կառուցվել է ամերիկահայ առաջին ավետարանական աղոթատեղին՝ Մարտիրոսաց եկեղեցին¹¹:

Հետագայում երկրով մեկ տարածված ամերիկահայ ավետարանական եկեղեցիները միավորվել են՝ ստեղծելով միջեկեղեցական կազմավորումներ՝ 1901 թ. Ուստրում՝ ԱՄՆ-ի Արևելյան նահանգների հայ ավետարանական միությունը, 1908 թ.՝ Կալիֆոռնիայի հայ ավետարանական եկեղեցիների միությունը: Արդեն 1923 թ. վերոհիշյալ առաջին միության կազմում կային կանոնավոր կազմակերպված ավետարանական 10 եկեղեցիներ և 14 առաքելություններ, իսկ երկրորդում՝ 7 եկեղեցիներ և 3 առաքելություններ¹²: Այս երկու միությունները ամերիկյան օրինակով ստեղծել են իրենց կրոնական գաղափարախոսության վրա հիմնված, սակայն առավելապես աշխարհիկ նյութական հետապնդող Ամերիկայի հայ ավետարանական ընկերակցությունը, որը կոչված էր բարոյապես ու նյութապես սատարելու ինչպես ամերիկահայության, այնպես էլ հեռավոր հայրենի ժողովրդի հոգևոր, կրթական, մշակութային ու առօրյա այլ կարիքները, աջակցելու ավետարանական եկեղեցիների կառուցմանը ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ հայրենիքում, օգնելու եղեռնից վերապրողներին, մասնակցելու Հայաստանի Առաջին Հանրապետության վերաշինության աշխատանքներին և այլն:

Հայ ավետարանականներն իրենց պարզ կահավորված և արտաքին տեսք ունեցող փոքրաթիվ եկեղեցիներով ու ժողովարաններով, ի տարբերություն առաքելականների բազմաթիվ, մեծածախս եկեղեցիների, ամուր հիմքեր էին ստեղծել նոր երկրում: Բացի այդ, հայ ավետարանական քարոզիչները կրթված էին ու հիմնականում անգլիախոս, քանի որ ուսանել էին օսմանյան երկրում հաստատված ամերիկյան միսիոներական կոլեջներում կամ ԱՄՆ-ի համապատասխան աստվածաբանական հաստատություններում: Քարոզներն իրականացվում էին ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն ու թուրքերեն: Իրենց համայնքների կրոնական հարցերը հոգալուց բացի, նրանք զգալի ներդրում են ունեցել նաև ԱՄՆ ժամանած հայ գաղթականների հովանավորության, գաղութի ազգային-կրթական մակարդակը բարձրացնելու, օտարացման աճող վրտանգի դեմ տեղի հայ երիտասարդությանը համախմբելու, հայրենիքին ու ժողովրդին սատարելու և հայանպաստ այլ ձեռնարկների կազմակերպման ու իրականացման գործում: 600 հայ

⁹ Տե՛ս R. Mirak, նշվ. աշխ., 1983, էջ 194:

¹⁰ Տե՛ս R. Mirak, նշվ. աշխ., 1977, էջ 144, V. M. Malcom. The Armenians in America. Boston, Chicago, 1919, էջ 103:

¹¹ Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 381:

¹² Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 99, A. S. Yeretzian, նշվ. աշխ., էջ 29, V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 100:

մանուկների համար բացվել էին կիրակնօրյա դպրոցներ, դեռահասների հոգևոր նկարագրի պահպանման նպաստով ստեղծվել էին 500 անդամ ներառող թվով 12 Բրիտոնեական Զանասիրաց Ընկերություններ, կազմակերպվել էին եկեղեցիայինում ու որբայինում եռանդուն գործունեություն ծավալող Կանանց Բարեսիրաց Ընկերություններ և այլն¹³:

Ամերիկահայ ավետարանական եկեղեցին սնվելով առաքելական Եկեղեցու քրիստոնեական դրույթներով և համաձայնելով նրա բողոկացուցիչ մասը, հետո էր հայ եկեղեցու նահապետական, հաճախ դրոմատիկ գաղափարաբանությունից, վերջինիս նման կառույթ չէր ազգային մշակույթի, լեզվի, սովորույթների մեջ սովանդականի անվերապահ պահպանմանը: Հայ ավետարանականները քրիստոնեության մասին քաղաքների հետ մեկտեղ լուսարանում էին, որ նոր երկրի հարափոփոխ կյանքում անհրաժեշտ է կողմնորոշվել դեպի առաջավորն ու զարգացածը, կոչ էին անում ընտրել ամերիկյան գործնական մտածելակերպն ու արքեպիսկոպոսը: Այս իմաստով ամերիկահայ ավետարանական եկեղեցին յուրատեսակ կապող օղակ էր հայ ավանդական մշակույթի և առաջավոր Ամերիկայի միջև:

ԱՄՆ-ում հայության թվի ստվարացման հետ մեկտեղ 1920-ական թվականների սկզբին Քեմբրիջում (Մասսաչուսեթսի նահանգ) և այլուր ստեղծվել են նաև կաթոլիկ եկեղեցիներ՝ ամերիկահայ փոքրաթիվ հետևորդների համար¹⁴:

Արդեն 1930-ական թթ. վերջին ամերիկահայության 80 % -ը սպտականում էր հայ առաքելական, 15 %-ը՝ ավետարանական եկեղեցիներին, իսկ 5 %-ը՝ կաթոլիկ և քրիստոնեական այլ ուղղություններին և աղանդներին¹⁵:

Ընդհանուր առմամբ, հայ եկեղեցին կրոնական ու գաղափարական տարածաշրջաններ ունեցող իր հարանվանական ճյուղավորումներով միմյանցից անկախ ու միաժամանակ միասնաբար վճռական դեր ու նշանակություն է ունեցել ամերիկահայ գաղութի կազմակերպման ու հայապահպանման գործում, գեահատելի հոգևոր, բարոյական ու նյութական նպաստ բերել հայրենի երկրի հայությանը:

ԱՄՆ-ի հայության ազգային համախմբման ու պահպանման գործում զգալի էր նաև հայ մամուլի դերը: Հիմնադրվելով ինչպես անհատ հայերի, այնպես էլ ազգային տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների, միությունների և ընկերությունների նախաձեռնությամբ, ամերիկահայ մամուլը գոյատևել է զլխավորապես բարերարների ու բաժանորդների նյութական ու բարոյական աջակցության շնորհիվ:

Ամերիկահայ առաջին պարբերական մամուլը՝ «Արեգակը», հիմնադրվել է 1838 թ. Զերսի Սիթիում ամերիկահայ լրագրության հայր» Հայկակ էլիինյանի ջանքերով¹⁶: Նրա հրատարակչական բեղուն գործունեության, ինչպես նաև ազգասեր ու նվիրյալ անհատ հայերի ջանքերով ԱՄՆ-ում հրատարակվել են մի շարք պարբերականներ ևս: Առաջինն այս թերթերից մի քանիսը տպագրական միջոցների և հնարավորությունների բացակայության պատճառով լույս են տեսել նաև խմորափայ, ձեռագիր վիճակում: Հետագայում, տեխնիկական բարձր պայմանների ի հայտ գալով, ամերիկահայ մամուլն ընդունել է իր ժամանակի պարբերականներին հատուկ ձև ու համապատասխան բովանդակություն¹⁷:

ԱՄՆ-ում հայ քաղաքական կուսակցությունների ի հայտ գալու հետ մեկտեղ ծնունդ են առել բազմաթիվ նոր պարբերականներ՝ կուսակցական պաշտոնաթերթեր, որոնք գտնվել են նրանց մշտական հովանավորության ներքո, ստացել նյութական աջակցություն, ունեցել արհեստավոր խմբագիրներ, երկրի ներսում ու դրսում գործող զգալի թվով թղթակիցներ, որոնց լավ կազմակերպված գործունեությամբ և թերթի Ե պաբանակի տարածման համակարգով պայմանավորվել է կուսակցական մամուլի հեղինակությունն ու ժողովրդականությունը, ապահովվել երկարակեցությունը:

Ամերիկահայ կուսակցական մամուլի առաջնեկներն էին 1899 թ. Նյու Յորքում լույս տեսած Վերակազմյալ հնչակյան կուսակցության պաշտոնաթերթ «Զայն հայրենյացը» և Հայ հեղափոխական դաշակցություն կուսակցության «Հայրենիքը»:

Ժամանակի ընթացքում իրենց տեական պաշտոնաթերթերը, ինչպես նաև ազգային, գրական, քաղաքական, բարոյագիտական բազմաթիվ պարբերականներն են ունեցել նաև Սոցիալ-դեմոկրատական հնչակյան, Սահմանադրական-դեմոկրատական, Հայ դեմոկրատական-լիբերալ,

¹³ Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 98:

¹⁴ Տե՛ս The Armenians in Massachusetts. Boston, 1937, էջ 70: R. Mirak. Armenians (Harvard Encyclopedia of American Ethnic Groups, ed. S. Thernstrom. Cambridge, London, 1981, էջ 148), R. Megerdichian, նշվ. աշխ., էջ 23:

¹⁵ Տե՛ս R. Mirak, նշվ. աշխ., 1983, էջ 195, A. S. Yeretzian, նշվ. աշխ., էջ 28, V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 99:

¹⁶ Տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 268:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 145, V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 124:

Ռամկավար-ազատական, ամերիկահայ բանվորական կուսակցությունները, ինչպես նաև ամերիկահայ տարբեր ընկերությունները, միություններն ու կազմակերպությունները: Այս պարբերականները գաղտնի և բացահայտ ճանապարհներով տարածվելով Քուրթիայում, Ռուսաստանում, ինչպես նաև եվրոպական ու հայաշատ այլ երկրներում, իրենց էջերում զլխավոր տեղ էին հատկացնում ազգային խնդիրներին, անդրադառնում օտար բռնակալների գերիշխանության տակ ճեծող հայրենի հեռավոր ժողովրդի թշվառ վիճակին ու նրա ազատագրման ուղիներին, տպագրում հայոց պատմությանը, գրականությանը, լեզվին ու մշակութին առնչվող հոգեվածներ, հայ և օտար գրականության նմուշներ, ամերիկահայ գաղթականների կյանքին ու կենցաղին, նոր երկրի պարելակերպին նրանց ընտելացմանն ու հարազատ երկրին մշտապես սատարելու կոչ անող նյութեր և այլն: Ընդ որում, երկրի արևմտակողմի հայ կուսակցական մամուլը, ելնելով այդտեղ հայության աստիճանաբար հիմնավորվելու անառարկելի փաստից, ավելի հակված էր լուսարանել ամերիկյան պարելակերպին, լեզվին, կարգ ու կանոնին, հպատակությանն ու նոր կյանքի բարբերին հարմարվելու ճշտ կապված հարցերը, մինչդեռ արևելակողմի մամուլը, մշտաբխուն էր պահում ամերիկահայության հայրենիք վերագոնանալու փափազը՝ ԱՄՆ-ը համարելով հայ պանդուխտների ժամանակավոր կացարան:

Ամերիկահայերն ունեցել են նաև ավետարանական և առաքելական եկեղեցիների կողմից հրատարակվող կրոնական մամուլ: Ընդ որում, ի տարբերություն առաքելական եկեղեցու փոքրաթիվ ու կարճատև հրատարակությունների, ավետարանական եկեղեցու բազմաթիվ ու տևական հրատարակությունները, կրոնականից բացի, մեծ տեղ են հատկացրել ազգային ու գաղութահայ խնդիրներին:

ԱՄՆ-ի հայերի ջանքերով լույս են տեսել ազգային, գրական, գիտական, իմաստասիրական, հասարակական, քաղաքական, տնտեսական, առևտրական, առողջապահական, բժշկական, մանկական, երիտասարդական, ուսումնական, երգիծական և տարաբնույթ այլ պարբերականներ ևս:

ԱՄՆ-ում հաստատված կիլիկիահայ թրքախոս հասվածը նույնպես ունեցել է իր պարբերական մամուլը, որը հրատարակվել է հայերեն և հայատառ թուրքերեն:

Նոր երկրում հայերի հետագա սովաբացմանն ու հաստատմանը համընթաց, ամերիկահայ մտավորականների ջանքերով սկսել են լույս տեսնել նաև մի շարք անգլերեն պարբերականներ՝ նպատակ ունենալով օտար, ինչպես նաև օտարացող հայ հասարակությանը հաղորդակից դարձնել հայ կյանքին, մշակութին, գրականությանը, պատմությանը, եկեղեցուն, քաղաքական վիճակին և Հայոց հարցին: Ետո թերթեր գրական ընդունելություն և լայն տարածում են գտել ոչ միայն ամերիկյան, այլ նաև եվրոպական, մասնավորապես՝ անգլիական, բարձրաստիճան պաշտոնյաների ու համապատասխան մտավորականների շրջաններում:

ԱՄՆ-ի հայաշատ խոշոր քաղաքներում ազգային մամուլի ի հայտ գալով սկզբնավորվել են նաև ամերիկահայ առաջին տպարանները, ուր, պարբերականներից բացի, հրատարակվել է նաև գաղութահայ բազմաբնույթ գրականություն:

Ամերիկահայության կյանքում կարևոր տեղ էր գրադեցնում նաև կրթության հարցը. նյութական միջոցներից սուղ գաղթական ընտանիքներն անգամ հոգում էին, որ իրենց զավակները ստանային գոնե նախնական կրթություն: ԲՆև հայերն ԱՄՆ էին եկել կրթական առումով ցածր մակարդակ ունեցող երկրներից (օսմանյան Քուրթիայի բնակչության 70 %-ը և ցարական Ռուսաստանի 80 %-ը անկարող էր կարգալ կամ գրել մայրենի լեզվով), այդուհանդերձ, նրանց 83 %-ը գրագետ էր՝ կարող էր կարգալ կամ գրել առնվազն մեկ լեզվով¹⁸: Իսկ ԱՄՆ ժամանած ուսյալ հայերն ընդհանուր առմամբ իրենց կրթական մակարդակով, լեզունների իմացությունը, գիտությունն ու արվեստի բնագավառներում ունեցած ձեռքբերումներով զգալիորեն գերազանցել են համանման այլ ազգերի ներկայացուցիչներին, որոշ գեպքերում անգամ՝ ամերիկացիներին (բացառություն էին կազմում սկանդինավյան երկրներից, Մեծ Բրիտանիայից և բրիտանական գաղութներից ժամանածները)¹⁹:

Նոր երկրում հայերի գերակշիռ մասն ուներ երկլեզվյա խոսակցական, ինչը կապված էր տեղի օտար (հանրային և գիշերային), ինչպես նաև հայկական դպրոցներում, ապա նաև ամերիկյան բարձրագույն կրթարաններում (կոլեջներ և համալսարաններ) նրանց ուսանելու փաստի հետ: Դարասկզբին ամերիկահայերի շրջանում հայերենի իմացության մակարդակը կազմել է ավելի քան 90 %, անգլերենինը՝ շուրջ 60 %²⁰:

¹⁸ Տե՛ս Ch. Mahakian. History of Armenians in California. A Thesis. California, 1935, էջ 68, 79:

¹⁹ Տե՛ս V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 104, A. S. Yeretzian, նշվ. աշխ., էջ 45, W. D. Wallis. Fresno Armenians (to 1919). Lawrence, 1965, էջ 54:

²⁰ Տե՛ս V. Wertsman, The Armenians in America, 1618—1976. A Chronology and Fact Book. New York, 1978, էջ 54, A. S. Yeretzian, նշվ. աշխ., էջ 45:

Ամերիկյան գաղթականական հանձնախմբի կողմից 1908—1909 թթ. երկրի 37 քաղաքների հանրային դպրոցներում անցկացված ուսումնասիրությունների համաձայն, դրանցում սովորում էին 1.031 հայ երեխաներ²¹: Ընդ որում, նրանց զգալի մասն ուսանում էր մանկապարտեզից մինչև 8-րդ դասարանը ներառող տարրական դասարաններում, հատկապես 1—3 դասարաններում (օրինակ՝ Նյու Յորքում՝ 83 %, Ուորթենթերում՝ 78 %): Միտամանակ, եթե իտալացի, պորտուգալացի, գերմանացի, ռուս և այլազգի երեխաները, աշխատել սկսելու և այլ հանգամանքներից ինչևիդ, շատ հաճախ վաղ հասակից հեռանում էին դպրոցից, ապա հայերի մոտ, փոքրաթիվ քաղաքային դպրոցներում, ընդունված էր ատավելագույն օգտվել դպրոցի ընձեռած հնարավորություններից (այսպես՝ 1917 թ. Յրեդնոյի հանրային դպրոցների վերջին բարձր դասարաններում ուսանողների 50 %-ը հայեր էին, կամ՝ 1923 թ. լոս Անջելեսի հանրային դպրոցներում սովորում էին շուրջ 350 հայեր)²²: Առկա էին դեպքեր, երբ ԱՄՆ ժամանած և նոր լեզվին ու պատմությանը անտեղյակ բազմաթիվ հայ երիտասարդներ, հաղթահարելով հոգեբանական խոչընդոտները, ստիպված էին լինում ուսանել իրենցից ցածր տարիքի երեխաների հետ: Անգլերենին անտեղյակ գաղթական հայերի համար կային նաև ոչ աստիճանակարգված՝ «շոգենավային դասարաններ», ինչպես նաև կիրակնօրյա ու գիշերային դպրոցներ²³:

Ժամանակի ընթացքում հայաշատ տարրեր քաղաքներում, գլխավորապես գաղթական հայերի երկրորդ սերնդի ներկայացուցիչների համար հանրային ու գիշերային դպրոցների կողքին ստեղծվել են նաև մի շարք հայկական դպրոցներ ու ձեմարաններ: 1880-ական թթ. վերջին Բարոնդ վարդուկյանի կողմից Նյու Յորքում հիմնվել է ԱՄՆ-ի հայկական առաջին դպրոցը՝ վարդուկյան վարժարանը: Մինչև առաջին աշխարհամարտի սկիզբը հայ առաքելական և ավետարանական եկեղեցիների ջանքերով հայկական դպրոցներ են բացվել ԱՄՆ-ի հայաշատ գրեթե բոլոր վայրերում: Դրանք եկեղեցու թեմական դպրոցներ չէին, այլ գործում էին տարրեր հարանվանությունների հայ երեխաների համար:

Հայկական դպրոցները մշտապես գտնվել են հոգևորականների, ուսուցիչների, համայնքի անդամների և հատկապես՝ ազգային դպրոցների հիմնասյունը հանդիսացող կանանց ամենօրյա հսկողության և հոգածության ներքո: Հայկական դպրոցներում դասընթացներն անց էին կացվում ամեն օր՝ կեսօրից հետո, ամերիկյան հանրային դպրոցներում պարապմունքների ավարտից հետո կամ՝ կիրակի առավոտյան: Մայրենի լեզվին արգեն ընտանեկան միջավայրից ծանոթ երեխաներին ուսուցանում էին հայոց լեզու (գրել, կարդալ), հայոց և ընդհանուր պատմություն, կրոն, աշխարհագրություն, մաթեմատիկա և այլն: Դասագրքերը մեծ մասամբ հայթայթվում էին դրսից: Դասարաններն ազբատիկ էին, գերեռնված ու փոքր:

Ազգային դպրոցների կողքին ամերիկահայության հայապահպանման գործում կարևոր դեր ու նշանակություն ունեին նաև երկրի հայաշատ տարրեր վայրերում եկեղեցիներին, ակումբներին, հայրենակցական միություններին ու կուսակցություններին առընթեր հիմնված ընթերցասրահներն ու գրադարանները, որոնք իրենց բուն նպատակից բացի ծառայել են նաև որպես հայոց լեզուն, մշակույթը, գաղութային ու ազգային հարցերը լուսաբանող կենտրոնահավաքատեղիներ, լսարան-դասասենյակներ:

Հակառակ սուղ միջոցներին՝ ամերիկյան հանրային դպրոցների հայ շրջանավարտների նկատելի մասը կարևոր ու առաջնահերթ խնդիր էր համարում տեղի բարձրագույն կրթարաններում ուսումնառության շարունակելն ու ձեռք բերած գիտելիքները կյանքում կիրառել: Եվ պատահական չէ, որ ամերիկյան կոլեջներում ու համալսարաններում ևս, ամերիկացիներ կայնազգի գաղթականների համեմատությամբ մեծ թիվ են կազմել հայ ուսանողները (Ամերիկահայ ուսանողական միության վիճակագրական տվյալների համաձայն, 1917 թ. ԱՄՆ-ում կար շուրջ 300, 1923 թ.՝ 500 ուսանող)²⁴:

ԱՄՆ-ում ուսանող հայերի մեծ մասը՝ գրեթե 90 %-ը, սեփական ուժերով էր հարթել իր կրթական ուղին. ուսումնառությանը զուգահեռ աշխատելով հայթայթել ապրուստի և ուսման միջոցները: Կարիքավոր ուսանողները ստացել են գործարար ու բարեսեր ազգայինների նյութական հովանավորությունը²⁵:

Ամերիկահայ ուսանող երիտասարդությունն իր բարեխիղճ աշխատասիրության և գիտության տարրեր բնագավառներում դրսևորած բացառիկ կարողությունների համար, մշտապես արժանացել է տեղի ինչպես ուսանողական, այնպես էլ դասախոսական շրջանների հիացմունքին ու գնահատանքին, ուսումնական, գիտական, անգամ՝ պետական բարձր պարգևների, խը-

²¹ Տե՛ս R. Mirak, նշվ. աշխ., 1983, էջ 271, V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 107:

²² Տե՛ս R. Mirak, նշվ. աշխ., 1983, էջ 272, A. S. Yeretian, նշվ. աշխ., էջ 51:

²³ Տե՛ս նույն տեղը:

²⁴ Տե՛ս Գ. Ա. Սարաֆյան, Փունջ մը խմբագրական ու հրապարակագրական էջերես, հ. Բ, ա. տ., ա. թ., էջ 219, A. S. Yeretian, նշվ. աշխ., էջ 25:

²⁵ Տե՛ս V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 109, Մուշեղ Եպիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 101, K. A. Sarafian. History of Education in Armenia. La Verne, 1930, էջ 182:

րախուսանքների, գիտական աստիճանների և այլն: Արդեն 1923 թ. Յելի, Քորնուելի, Փենսիլվանիայի, Հիչայոյի, Ուիսկոնսինի, Կալիֆոռնիայի և ամերիկյան առաջնակարգ այլ համալսարաններում դասավանդում էին երկու տասնյակից ավելի հայազգի պրոֆեսորներ, ընդ որում, նրանցից շատերը հետազոտական աշխատանքի հետ միասին ղեկավարում էին նաև կրթական ու գիտական այս կամ այն բնագավառները ներկայացնող տարբեր հաստատություններ²⁶:

ԱՄՆ-ում կրթական ու մշակութային կյանքի ղաղափայտ համար առկա հիմնականում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտը նպաստել է ամերիկահայ գրականության, թատրոնի, երաժշտության, նկարչության, քանդակագործության և արվեստի այլ բնագավառների ինքնադրսևորմանն ու առաջընթացին՝ բացահայտելով հիշյալ ասպարեզներում կարող ու շնորհալի ուժերին:

Ամերիկահայ գրական կյանքը սկսել է ձևավորվել գլխավորապես դարասկզբին՝ շնորհիվ հայրենի տարբեր բնակավայրերից ժամանած կամ ԱՄՆ-ում հասակ առած սակավաթիվ անհատների ջանքերի (Հ. էկիսյան, Մ. Պաղտասարյան, Ն. Մանկունի, Ս. Գարրիելյան, Զ. Գալստյան, Ս. Պարթևյան, Մ. Եպիսկ. Սերոբյան, Համաստեղ): Նրանց ստեղծագործությունների հրատարակման հիմնական ասպարեզն ինչպես կուսակցական, այնպես էլ զուտ գրական ուղղվածություն ունեցող պարբերականներն էին՝ «Հայրենիք» օրաթերթը, «Հայրենիք», «Փյունիկ» ամսագրերը և այլն, որոնք «եղան անփոխարինելի բնմ հայ գրականության ստեղծման, պահպանման, տարածման և քաջալերումին»²⁷: Սկզբնապես նախապատրաստական փուլում գտնվող ամերիկահայ գրականությունը ներկայացվում էր հիմնականում հայերեն բազմաժանր ստեղծագործություններով, օտար հեղինակների գեղարվեստական գործերի թարգմանություններով, ամերիկյան, համաշխարհային, ինչպես նաև հայ դասական գրականության և իմաստասիրության գիտական, իմացական ու գեղարվեստական բնույթի ուսումնասիրություններով՝ պատշաճ հիմքեր ստեղծելով «ամերիկահայ իրաւ գրականության» համար²⁸:

Ամերիկահայ մշակութային կյանքը նշանավորվել է նաև թատերական արվեստի սկզբնավորումով: Առաջին թատերախմբերը կազմավորվել են գլխավորապես սիրողներից, քանի որ դեպի Նոր Երկիր վաղ շրջանի հայ գաղթականության շարքերում գրեթե բացակայում էին արհեստավար գերասանները: ԱՄՆ-ում հայերեն ներկայացումը բնագործվել է 1890 թ. Ուորթենթերի Գրենդ Արմի Նոլում, իսկ արդեն 1905 թ. երկրի հայաշատ գրեթե բոլոր վայրերում գործում էին ազգային թատերախմբեր: Մեծ համբավ ունեին Բոստոնի Դուդլի Սթրիթ Օփերա Հատուկ և Նյու Յորքի Կարնեգի կիցի հայկական խմբերը²⁹: Հետագա տարիներին ստեղծվել են «Ժիրայր» (1906 թ., Բեյսիս), «Հնչակ» (1907 թ., Փրովիդենս), «Աղամյան», «Ազատամարտ» (1908 թ., Փրովիդենս), «Փարամազ» (1909 թ., Յունյն Սիթի), «Երուրյան» (Ֆրեզնո), «Ավարայր» (1913 թ., Սփրինգֆիլդ), «Շանթ» (1916 թ., Ֆաուլեր), Հայ դրամատիկ (1916 թ., Նյու Յորք), «Փարոս» (1917 թ., Հարթֆորդ), Հայ դրամատիկ (1921 թ., Բոստոն), «Շանթ» (1922 թ., Գիկագո) և այլ թատերախմբեր³⁰:

Ազգային, հիմնականում հայրենասիրական, ինչպես նաև օտար հեղինակների գրական տարբեր բնույթի գործերի բնականացումները մեծ ընդունելություն էին գտնում հարազատ լեզվին ու արվեստին կարոտ մնացած ամերիկահայերի շրջանում:

Ամերիկահայ սիրողական թատերախմբերին նոր լիցք ու կենդանի շունչ են հաղորդել ԱՄՆ ժամանած արհեստավար ու ճանաչված արվեստագետները՝ տիկնայք Մելիքյանն ու Վերոնիկ Մամուլյանը, Հովհաննես և Արթուր Զարիֆյան, Սեդրակ և Մարիան Սուրբյան, Անդրուսիկ և Ազնիվ ամուսինները, Հովհաննես Արելյանը, Նիլի Նարուբե և ուրիշներ³¹: ԱՄՆ-ի հայ գաղութն իր «իրական, կյանքոտ թատրոնին սկզբնավորությունը» պարտական է մասնավորապես կովկասահայ դերասանայտ Հովհ. Զարիֆյանին, որը «թերևս անգիտակցաբար, բայց ձեռնհասորեն 1921 թ. սկզբներին եկավ ամերիկահայ թատրոնն ապրեցնելու, ուժեղացնելու և իր կոչումին, իր դերին բարձր աստիճանին հասցնելու»³²:

²⁶ Տե՛ս V. M. Malcom, նշվ. աշխ., էջ 110, A. S. Yeretzián, նշվ. աշխ., էջ 24—25:

²⁷ Տե՛ս «Նավասարդ ամսագիր», Գլենդեյլ, մայիս, 1990, № 94, էջ 29:

²⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 30:

²⁹ Տե՛ս R. Mirak, նշվ. աշխ., 1983, էջ 169:

³⁰ Տե՛ս Ք. Մատազեյան, Հուշամատյան Քոմարգայի, Բեյրութ, 1959 էջ 229, Ղազար-Ջաբրը, Հուշամատյան Բարձր Հայքի. Կարինապատում, Բեյրութ, 1957, էջ 760: Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք, կազմ. Հ. Խաչմանյան, Բոստոն, 1925, էջ 457, 459, 461, «Առաջա-րեզ: Ժողովածու տասնամյակի առթիվ (1908—1918)», Ֆրեզնո, 1918, էջ 317, «Հնչակյան տարեգիրք», Ա տարի, Փրովիդենս, 1931, էջ 272, «Հնչակյան տարեգիրք», Բ տարի, Փրովիդենս, 1932, էջ 270:

³¹ Տե՛ս Ս. Գալոյան, Շիրակի հայերի գաղթը դեպի Ամերիկա, Լոս Անջելես, 1950, էջ 103:

³² Տե՛ս Քեռոյիկ, Ամենուս տարեցույցը, 20-րդ տարի, Վենետիկ, 1926, էջ 435, 436:

XX դ. առաջին տասնամյակից սկսած ԱՄՆ-ում հանդես են եկել նաև շարժանկարի առաջին սակավաթիվ հայ դերասանները (Ալլա Նազիմովա, Օրորա Մարտիկանյան, Թամարա Դեյկարիանովա, Թամարա Շայն, Թամարա Գեվա, Թամարա Խումանովա, Ալիմ Քամիրով, Քայ Քումանյան, Ռուբեն Մամուլյան և այլոք)՝ իրենց ավանդը ներդնելով հյուրընկալ երկրի կինոարվեստի զարգացման գործին³³:

Ամերիկահայ մշակութային կյանքում իր ուրույն տեղն ունեն հանքերը նաև երգարվեստը: Միրոզական մակարդակով այն իր վաղ դրսևորումն է ունեցել դեռևս 1860-ական թվականներին՝ հանձին Միքայել Թոփհաննիսյանի, որի երգած ինքնատիպ մեղեդիներով հիացած ամերիկացիները դրանք նոտագրել են ջութակի և դաշնամուրի համար³⁴: Հետագայում, սկսած 1880-ական թթ. երկրորդ կեսից և հատկապես դարասկզբից, ԱՄՆ-ում հանդես են եկել բազմաթիվ արհեստավարժ երգիչ-երգչուհիներ (Ալեքսիա Պանյան, Ֆլորա Զարել, Ազան Զոփուրյան, Փաուլ Անանյան, Ֆիրյալ Բեննիսյան, Արմանդ Թոքատյան, Ալիմ Քյուրթլյան, Թորգոմ Պեղազյան, Զարել Արամ, Արմենակ Շահմուրադյան և այլոք), երաժիշտներ (Լևոն Տեր-Օհանյան, Աստղիկ Գալուզճյան, Սարգիս Քուշնարյան՝ դաշնամուր, Սիրարփի Գոնտալյան, Մինաս Զաղացպանյան՝ ջութակ, Հելեն Մեհերարյան՝ տավիղ, Հայկ Հովհաննիսյան՝ թառ և այլն), երաժշտագետ-երգահաններ (Գրիգոր Գալֆայան, Սյունի, Հարություն Մեհերարյան, Ռուբեն Տրգրանյան), երկրի գրեթե բոլոր հայաշատ վայրերում հիմնվել են ազգային երգչախմբեր:

Ժամանակի ընթացքում մի շարք շնորհալի հայերի, գլխավորապես արևելահայերի ջանքերով ԱՄՆ-ում ստեղծվել ու զարգացել է նաև գաղութահայ պարարվեստը (Արմենուհի Օհանյան, Անիթա Ռզվանյան, Մարի Սուրարյան)³⁵:

Ամերիկահայերն իրենց տաղանդն ու հմտությունը դրսևորել են նաև լուսանկարչության (Մկրտիչ Կարո՝ գունավոր լուսանկարահանման եղանակի հայտնագործող), նկարչության (Սարգիս Երկանյան, Մանվել Ալատիկյան, Գ. Գալուստ, Միհրան Սերալյան, Արշակ Ֆեթվաճյան, Հովսեփ Փուշման, Փանոս Թերլեմեզյան և այլոք), քանդակագործության (Հայկ Բատիկյան, Հենրի Լայն, Հակոբ Գյուրջյան, Մարտիրոս Մելիքյան և այլոք) բնագավառներում³⁶:

Այսպիսով, հասարակական-տնտեսական, պատմաքաղաքական, ինչպես նաև մշակութային հանգամանքների բերումով ԱՄՆ մեկնած հայ գաղթականությունը նոր երկիր էր փոխադրել նաև իր հոգևոր արժեքները՝ կյանքի նոր պայմաններում և նոր միջավայրում դրանք նորովի զարգացնելով ու կատարելագործելով: ԱՄՆ-ում հայության թվի ստվարացման հետ միասին անցյալ դարի 80-ական թթ. վերջից կազմավորված եկեղեցին, դպրոցը, պարբերական մամուլն ու մշակույթը նպաստել են օտարության մեջ խարխափող և ուժացման մշտական վտանգը դիմակայող հայության ստվար զանգվածների ազգային նկարագրի պահպանմանը, ինչպես նաև գաղութի ու հայրենի երկրի միջև հոգևոր կապի ամրապնդմանը:

К. Р. АВАКЯН—Духовная и культурно-образовательная жизнь армян в США (1888—1924 гг.).—Духовная и культурно-образовательная жизнь американских армян развивалась параллельно с постепенным ростом численности армян на Новой Земле. Уже в 1888 г. в Устре было создано первое американо-армянское духовно-культурное образование «Катчар Айкакан».

Сохранению национального облика армян Америки способствовали печать (первая газета «Арегак» начала издаваться в Джерси-Сити с 1888 года), церковь (первая Апостольская церковь Святого Спасителя построена в Устре, Евангельская—Мучеников—в 1901-ом, Католическая—в начале 1920-х годов), школа (первое национальное училище «Вардукян» основано в конце 1880-х годов).

Все это способствовало дальнейшему развитию культурно-образовательного уровня армянской колонии и укреплению духовной связи с Родиной.

³³ Տե՛ս Ա. Բախլիճյան, Մագումով հայ են, Երևան, 1993, էջ 81, 100, 128, 129, 179, 225:

³⁴ Տե՛ս Մուշեղ Եսիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 30:

³⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 63, 247, Մուշեղ Եսիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 159, R. Mirak, նշվ. աշխ., 1983, էջ 103, 170, «Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք», կազմ. Հ. Խաչմանյան, Բոստոն, 1926, էջ 136, 305, Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, ԺԹ տարի, Վիննեա, 1925, էջ 188: Թեոդիկ, նշվ. աշխ., 1926, էջ 438, 470, 472—474, 484, Ch. Mahakian, նշվ. աշխ., էջ 77, Ա. Ալպոյանյան, Պատմություն Մալաթիո հայոց, Բեյրութ, 1961, էջ 472, Ս. Գալոյան, նշվ. աշխ., էջ 104:

³⁶ Տե՛ս Մուշեղ Եսիսկոպոս, նշվ. աշխ., Բ տարի, 1913, էջ 386, Մուշեղ Եսիսկոպոս, նշվ. աշխ., Ա տարի, 1912, էջ 74, 248, 251, «Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք», 1925, էջ 69, 321, Թեոդիկ, նշվ. աշխ., 1926, էջ 506, 507, 522, 724, Թեոդիկ, նշվ. աշխ., 1925, էջ 191, 192, Ch. Mahakian, նշվ. աշխ., էջ 76: